

առաջին խօսեցեալն էր Ս. Փրկչի եւ Արկաղիայի իշխան Երարդ Գ-ի (1345-1388) ազջիկը՝ Կատարինէ, որ ետքէն ամուսնացաւ Գամալայի ազնուականներէն Անդրոնիկ Ասան Զաքարիայի հետ (1) :

Ամուսնութեան չյաջողուելուն վրայ Լեւոն զայրացած՝ Կիպրոս բնակող այրի կնոջ մը հետ ամուսնացաւ այս անգամ (1369 մայիս) : Լեւոնի կինը զուա Ֆրանսացի էր, այսինքն՝ Սուասոնի (Ֆրանսա) ազնուական ցեղէն Փամագոսայի Յովհաննէս պալլին ազջիկը՝ Մարգարիտ (2), որուն առաջին ամուսինն եղած էր Humfroy de Scandelion (3) :

Ամուսնութենէն վերջը Լեւոն սկսաւ դիմումներ ընել՝ ձեռք բերելու համար իր հաւուն Ամօրի Լուսինեանի թողած հարստութիւնը, որ իրեն կիցնար . բայց չկրցաւ յաջողիլ, այլ միայն Պեարոս Բ-ի Երուսաղէմի թագաւոր պսակուելուն առիթով՝ ինքն ալ « Երուսաղէմի սենեջալ » անուանուեցաւ Պեարոսէն (4) :

Մինչդեռ Լեւոն մէկ կողմէ կը շարունակէր իր դիմումներն Ամօրիի ժառանգութեան օրինաւոր կարգադրութեան համար, միւս կողմէ՝ ճիշտ Պեմօնդի կատարած դերին պէս՝ ձեռքի տակէ կը զրգռէր Կիլիկիայի Հայերը,

(1) G. Schlumberger, *Numism. de l'Orient latin*, եր. 328 :

(2) Միայ է քէ Լեւոն ամուսնացած ըլլայ Մարիս կամ Մարիալ անունով աղջկան մը հետ : Մարիալ՝ Կոստանդին Գ-ի կիցն էր, որ շփոթուած է Մարգարիտ հետ :

(3) Gaspard Thomas de la Thomassiere, *Assises et bons usages du royaume de Jerusalem etc.* Paris, 1690, եր. 228; Տե՛ս նաև Du Cange, *Les Familles d'Outre-mer*, եր. 29; Աստիգլէ կը տեղեկանանք, որ Մարգարիտ ուներ եօթն եղբայր (1. Renaut, 2. Gui, 3. Gautier, 4. Anciau, 5. Balian, 6. Phelippe, 7. Bauduin) եւ հինգ ֆոյր (1. Estefenie, 2. Femie, 3. Douce, 4. Aalis, 5. Marie). մօրն անունն էր Isabeau, որ Johan de Brie-ի աղջիկն էր. իսկ հօրը պապը Renaut de Soisson կը կոչուէր եւ Կիպրոսի քաղաքաւորութեան մարաշախտ էր :

(4) Այս անուանումը կատարուեցաւ 1372 հոկտ. 17-ին, ինչպէս կը հաստատուէ Ստրաբուլդի. «A di 17 Ottubrio doppo incoronato, il re ha dato li sottoseritti officii alli sottoseritti signori del regno di Hierusalem et sonno confirmati . . . [A] don Lion de Lusugnan [quello de] siniscalco.» Տե՛ս Mas Latrie, *Hist. Chypre*, հս. Բ, եր. 354; նման նաև Maxe-gac, եր. 184 :